ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05

«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ **«ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՐՇԱՎՆԵՐԻ, ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ, ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԽԹԱՆՈՒՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ»** ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2023 թ. հունվարի 12-ին՝ ժամը 14.00-ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

1. Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

2. Զարա Ասլանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ՝ (հանձնաժողովի անդամ),
3. Անուշ Մխիթարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
4. Մարիանա Մինասյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
5. Նարինե Հովհաննիսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)՝ հեռավար:

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում
2. Գնահատումների ամփոփում

1. Օրակարգի 1-ին հարց

Հանձնաժողովի նախագահ Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված և ներկայացրեց նիստի օրակարգը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո ձայների 4 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.

Հաստատել նիստի օրակարգը:

2. Օրակարգի 2-րդ հարց

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23 ծածկագրով հայտարարված «Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների (այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն)» խթանում՝ այդ թվում նաև Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ» դրամաշնորհի հատկացման մրցույթին դիմած 6 կազմակերպությունների մրցութային հայտերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Հանձնաժողովը ավելի խորը քննարկման արդյունքում՝ արձանագրեց հետևյալ նկատառումներ.

- «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամի կողմից նմանատիպ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ ներկայացված տեղեկանքը՝ համարժեք չէ հրավերով պահանջվող նմանատիպ ծրագրերի իրականացումը հավաստող պայմանագրերին,
- «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված պայմանագրերը չեն առնչվում նույնաբովանդակ ծրագրերին,
- «Կրթություն և գործունեություն» սոցիալ-բարեգործական կրթամշակութային հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվությունը ևս համարժեք չէ նմանատիպ ծրագրերի իրականացումն հավաստող պայմանագրերին, նախանշված չեն ծրագրի ազդեցությունը, իրատեսական շարունակելիության ձևը և (կամ) կայունության ապահովման մեխանիզմները· ծրագիրը մասամբ է համահունչ մասնակցի կանոնադրական նպատակներին և խնդիրներին·
- «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված ծրագրի ազդեցությունը, իրատեսական շարունակելիության ձևը և (կամ) կայունության ապահովման մեխանիզմները ևս թերի են, ծրագրում մասնագետների բավարար ընդգրկվածություն չկա,
- «Արալեզ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված նմանատիպ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը համարժեք չէ հայտով պահանջվող նմանատիպ ծրագրերի իրականացումը հավաստող պայմանագրերին,
- «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտի փաթեթը բավարարում է դրամաշնորհի հրավերով սահմանված չափանիշներին, ծրագրերով նախանշված ակնկալվող արդյունքները համապատասխանում են ծրագրի նպատակներին և խնդիրներին, կազմակերպությունն ունի նմանատիպ ծրագրի իրականացման հարուստ փորձառությունը հավաստող պայմանագրեր:

Հանձնաժողովի անդամները քարտուղարին փոխանցեցին իրենց կողմից լրացված և ստորագրված գնահատման թերթիկները (կցվում են) մրցույթի հայտերի գնահատման արդյունքներն ամփոփելու համար:

Հանձնաժողովը ամփոփեց գնահատման արդյունքները համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Տեղեկություն հրավերով պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ	Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով	Մասնակցի ներկայացրած ֆինանսական	Տեղեկություն հայտի հետ-կանչման կամ փոփոխությունների մասին,	Հայտերի գնահատման

			սահմանված վավերապայման ներին համապատասխան լինելու վերաբերյալ	նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/	ինչպես նաև հայտի վերաբերյալ հարցումների մասին	արդյունքները
1	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն	բացակայում էին՝ «Մաս I»-ի 2.4 կետի 1) և 2) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը Կազմակերպության կանոնադրության պատճենը	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	3 634 000	Կազմակերպությունը սահմանված ժամկետում քարտուղարին է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը	0,25
2	«Կրթություն և գործունեություն» սոցիալ-բարեգործական կրթամշակութային հիմնադրամ	բացակայում էին՝ «Մաս I»-ի 2.4 կետի 1) և 2) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը ծրագրի ղեկավարի փորձառությունը հավաստող տեղեկատվությունը	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	3 621 000	Կազմակերպությունը սահմանված ժամկետում քարտուղարին է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը	0,15
3	«Արալեզ» բարեգործական հասարակական կազմակերպություն	Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	3 156 500	Հայտում փոփոխություն և հայտի վերաբերյալ հարցումներ չեն եղել	0,4
4	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	բացակայում էին «Մաս I»-ի 2.4 կետի 2) ենթակետով	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի	3 571 152	Կազմակերպությունը սահմանված ժամկետում քարտուղարին է	0,8

		պահանջվող փաստաթղթերը	վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին		ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը	
5	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամ	բացակայում էին «Մաս I»-ի 2.4 կետի 2) ենթակետով պահանջվող փաստաթղթերը Ֆինանսական նախահաշիվը ներկակայցված էր առանց ԱԱՀ-ի	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	3 547 440	Կազմակերպությունը սահմանված ժամկետում քարտուղարին է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթայի ն փաթեթը	0,9
6	«Մունետիկ» մանկապատանեկան մշակութային հասարակական կազմակերպություն	Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	3 010 976	Հայտում փոփոխություն և հայտի վերաբերյալ հարցումներ չեն եղել	1

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո 4 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.

2.1 Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23 ծածկագրով հայտարարած «Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների (այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն)» խթանում՝ այդ թվում նաև Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ» դրամաշնորհային մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 1-ի:
2.2 Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23 ծածկագրով հայտարարած «Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների (այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն)» խթանում՝ այդ թվում նաև Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ» դրամաշնորհային մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 2-ի:
2.3 Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն նիստի արձանագրությունը, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-

Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 28.1-ին կետով նախատեսված հայտարարությունները և սույն արձանագրության 2.1 կետում նշված կազմակերպությունների ներկայացրած հայտերի պատճենները ներկայացնել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:

3. Հանձնաժողովի նախագահին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն արձանագրության 2.1 և 2.2 կետերով հանձնաժողովի ընդունած որոշումները նախարարի հաստատմանը ներկայացնելու նպատակով մշակել և ներկայացնել համապատասխան հրամանի նախագիծ:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Անուշ Մխիթարյան

Մարիանա Մինասյան

Նարինե Հովհաննիսյան

Հավելված 1.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2023 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ
05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23** ծածկագրով հայտարարած **«Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների(այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն) խթանում՝ այդ թվում Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ»** մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Միջոցառման /ծրագրի/ անվանումը	Կազմակերպության կողից ակնկալվող գումարը /դրամ/	Նախարարության կողմից տրամադրվող առավելագույն գումարը /դրամ, ներառյալ ԱԱՀ/
1.	«Մունետիկ» մանկապատանեկան մշակութային հասարակական կազմակերպություն	«Մեկ հայրենիք, մեկ նպատակ»	3 010 976*	3 634 400

**** Կազմակերպության կողմից ներկայացված գումարը չի ներառում ԱԱՀ***

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Անուշ Մխիթարյան

Մարիանա Մինասյան

Նարինե Հովհաննիսյան

Հավելված 2.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2023 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ
05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՀՅ-04/23** ծածկագրով հայտարարած **«Հայրենաճանաչությանը միտված նախաձեռնությունների(այդ թվում արշավների, գիտաժողովների, օլիմպիադաների և այլն) խթանում՝ այդ թվում Սփյուռքի և Արցախի երիտասարդների ակտիվ ներգրավմամբ»** մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

Հ/հ	**Կազմակերպության անվանումը**	**Միջոցառման /ծրագրի/ անվանումը**	**Կազմակերպության կողմից ակնկալվող գումարը /դրամ/**
1	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն	«Երիտասարդական ճամբար Մարտունիում»	3 634 000
2	«Կրթություն և գործունեություն» սոցիալ-բարեգործական կրթամշակութային հիմնադրամ	«Թանգարանը՝ հայրենաճանաչության օջախ»	3 621 000
3	«Արալեզ» բարեգործական հասարակական կազմակերպություն	«Պատմության հետքերով»	3 156 500
4	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	«Հարենաճանաչ սերունդ» նախագիծ	3 571 152
5	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամ	«Հայրենիքը մենք ենք»	3 547 440

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Անուշ Մխիթարյան

Մարիանա Մինասյան

Նարինե Հովհաննիսյան